ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

и պատասխան Ձեր 05.08.2024թ. հ. 221-2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180. 2-րդ հոդվածի (այսուհետ՝ Հոդված)՝ մշակութային գործունեության իրականացման նպատակով հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) օգտագործման պայմանները, պահանջները և սահմանափակումները խախտելը՝ առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով: Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն հանդիսացող այն առարկաների բռնագրավմամբ, որոնք հիշյալ խախտումները կատարելու գործիք են համարվել, կամ առանց դրանց բռնագրավման:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին կետի՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Միաժամանակ տեղեկացվում է նաև, որ Կենտրոն վարչական շրջանի Ալեք Մանուկյան փողոցի հ.6/5 հասցեին կից, ոչ սահմանված տեղում՝ երաժշտական գործիքների օգտագործմամբ, խախտվել են Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի հ. 849-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջները, որի համար «ԹԱՈՒՆ ԵՎՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սերգեյ Բախշիկի Ղազարյանի նկատմամբ 2024 թվականի հուլիսի 13-ին, 25-ին և 31-ին Հոդվածի համաձայն կազմվել են հ.008019, հ.008036, հ.008224 արձանագրությունները:

Տեղեկացվում է նաև, որ հսկողական աշխատանքները կրելու են շարունակական բնույթ, և նոր վարչական իրավախախտման հիմքերի առկայության դեպքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, կհարուցվեն վարչական վարույթներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ